ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/08

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան
Մասնակից՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացուցիչներ՝ Գ. Ղազարյանի, Ա. Մելքոնյանի
«Բիո-Քիմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյանի, Ա. Սիմոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգ, հականեխիչ անտիսեպտիկ և ախտահանիչ միջոցների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/257-2021 գրությամբ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի 30.12.2020թ. 02 //8694-2020 գրության հիման վրա, 14.01.2021թ.-ին «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 14.01.2021թ.-ին:

14.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/08 համարի ծածկագիրը:

21.01.2021թ.-ին և 05.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 21.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.02.2021թ.-ին:

2. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը 30.12.2020թ. 02 //8694-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Կից ներկայացվում է 2020 թվականի հոկտեմբերի 21-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և <<Բիո-Քիմ>> ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը և կից փաստաթղթերը: Հայտնում ենք Ձեզ, որ <<Բիո-Քիմ>> ՍՊԸ-ի կողմից փաստացի մատակարարված ապրանքը չի համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրին /կից ներկայացվում է ՀՀ Առողջապահության նախարարության կողմից անհամապատասխանության եզրակացությունը/, այդ իսկ պատճառով մարզպետարանը որոշում կայացրեց միակողմանի լուծել պայմանագիրը, հաշվի առնելով ՀՀ գնումների

մասին օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ ենթակետի ա/ պարբերությունը, ինչպես նաև կնքված պայմանագրի 2.1.4, 2.1.7.1-ի ա/ և 6.1 կետերը: Խնդրում եմ գործին տալ համապատասխան ընթացք:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուի անունից arsenmelkonyan06@gmail.com էլ. փոստի հասցեից Բողոքներ քննող անձին է ներկայացվել անստորագիր դիրքորոշում: Համաձայն այդ դիրքորոշման.

«ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊԸ-ի միջև 21.10.2020թ-ին ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34 ծածկագրով կնքված պայմանգրի 5-րդ բաժնի «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ» մատակարարը պարտավոր էր armeps.am էլ. կայքի միջոցով ներկայացնել հանձնման-ընդունման արձանագրությունը, սակայն համակարգի միջոցով Գեղարքունիքի մարզպետարանը հանձնման-ընդունման արձանագրություն չի ստացել, իսկ պայմանագրի 5 բաժնի 5.1 համաձայն մատակարարը ապրանքի մատակարարումը պետք է իրականացներ հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ընդունման պահից սկսած: Ինչ վերաբերվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների կողմից ապրանքների ընդունման փաստին, ապա նշեմ, որ մատակարարը իրավունք չուներ մատակարարելու տվյալ ապրանքը:

Նշեմ նաև, որ մարզպետարան ներկայացված արձանագրությունը կազմվել է 21.10.2020թ.-ի դրությամբ, իսկ ապրանքների փաստացի մատակարարումն իրականացվել է 2020 թվականի հոկտեմբերի 22-ից 24-ը ընկած ժամանակահատվածում:

Ինչ վերաբերվում է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պատասխանատու ստորաբաժանման բացասական եզրակացությանը, ապա մատակարար կազմակերպության կողմից էլ. armeps.am համակարգի միջոցով հանձնման-ընդունման արձանագրություն չի ներկայացվել, ուստի Պ.Ս.-ը չի կարողացել էլ. համակարգի միջոցով բացասական եզրակացություն տալ:

Նշեմ նաև որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակիցներ՝ Պ.Ս. ղեկավար Նելսոն Սարգսյանը 20.10.2020թ.-ից 03.11.2020թ.-ը, գնումների համակարգող Արթուր Բաղեյանը 16.10.2020թ.-ից 30.10.2020թ.-ը և Պ.Ս.- ստորաբաժանման անդամ Արսեն Մելքոնյանը 23.10.2020թ.- ից 06.11.2020թ-ը ընկած ժամնակահատվածներում հիվանդացել

են համավարակով և գտնվել են անաշխատունակ վիճակում (անաշխատունակության թերթիկների լուսապատճեները ներկայացվում են): (Կարծում եմ, որ 15 աշխատանքային օրյա ժամկետը կարելի է համարել չխախտված)

2020թ. նոյեմբերի 20-ին մարզպետարանը գրությամբ դիմել է «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊԸ-ին՝ մարզպետարանին տրամադրել իրենց կողմից արտադրված հականեխիչ (անտիսեպտիկի) և ախտահանիչ միջոցների վիրուսաբանական-մանրէաբանական լաբարատոր փորձաքննության փաստաթղթերը:

Քանի որ մատակարարված նյութերը մասնագիտական փորձաքննության կարիք ունեին, այդ իսկ պատճառով 23-ը նոյմեբերի 2020թ. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը դիմել է ՀՀ Առողջապահության նախարարությանը՝ համապատասխան եզրակացություն ստանալու նպատակով, որի արդյունքում 26-ը նոյմեբերի 2020թ-ի ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ստացված պատասխանի հիման վրա՝ այն է «մատակարարված ապրանքները չունեն վիրուսասպան փորձաքննության արդյունքներ, իսկ մնացած փորձաքննությունները իրականացվել են կազմակերպություններում, որոնք չեն համապատասխանում ՀՀ Առողջապահության նախարարի 2014թ-ի մայիսի 7-ի թիվ 17-Ն հրամանի 8-րդ կետի պահանջներին», ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված ապրանքները դիտարկել է որպես ոչ պատշաճ որակի և 09.12.2020թ-ին գրությամբ դիմել է «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով ողջամիտ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքները ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ներկայացված մեթոդական ցուցման համապատասխան ապրանքերով, սակայն «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊԸ-ի կողմից ապրանքների փոխարինում չի կատարվել:

Եթե ըստ «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊԸ-ի կողմից տրված դիրքորոշման ՀՀ Առողջապահության նախարարության կողմից տրված եզրակացությունը կարելի է համարել խեղաթյուրված, ապա տեղեկացնում եմ, որ «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊԸ-ին գրությունը մեր կողմից գրվել է հիմք ընդունելով ՀՀ Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի գրությունը:

Ինչ վերաբերվում է մեր կողմից ապրանքների մնացորդի չվերադարձնելուն, ապա տեղեկացնում եմ, որ պայմանագրով նման պարտավորություն չկա:

Ուստի «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊԸ 10.12.2020թ-ի գրությամբ մեզ խնդրել է տեղեկացնել մնացորդային քանակի վերաբերյալ, որը պատշաճ տրամադրվել է և ոչ մի քայլ չի ձեռնարկել ապրանքները փոխարինելու ուղղությամբ:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը հիմնվելով կնքված պայմանագրի 2.1.7. կետի 2.1.7.1. ենթակետի վրա որոշել է միակողմանի լուծել կնքված պայմանագիրը:

Միաժամանակ հարկ է համարվում նշել, որ ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 1524-Ն որոշմամբ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին գումար է հատկացվել կորոնավիրուսային հիվանդության (Covid-19) պայմաններում ուսումնական հաստատությունների համար հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման և տրամադրման նպատակով:

Ուստի ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը չի իրականացրել այնպիսի գործողություններ, որոնց արդյունքում պետական բյուջեից հատկացված միջոցներն օգտագործվեին ոչ նպատակային ծախսեր չկատարելու նպատակով:»:

3. <u>«Բիո-Քիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.01.2021թ.-ին գրությամբ դիմել է «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/257-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին:

20.01.2021թ-ին ներկայացված գրավոր դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/08 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) վերաբերյալ հայտնելով դիրքորոշումս նշեմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության պահանջը «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերությանը (այսուհետ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա պարբերության համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման

գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Այսինքն պայմանագրով նախատեսված պարտավորության խախտման և պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման միաժամանակյա առկայության դեպքում նոր կարելի է փաստել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերի մասին: Ի դեպ նշված իրավակարգավորումը ինքնանպատակ չէ, այն ուղղված է կարգավորելու երկկողմ շահերը՝ պատվիրատուի և մասնակցի և դրանց համադրության համատեքստում նոր միայն հնարավոր է արձանագրել կիրառելի իրավական նորմերի մասին:

Ուստի գտնում եմ, որ սույն գործով պարզաբանման է ենթակա հետևյալ հարցադրումը.

Արդյո՞ք «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերությունը խախտել է կողմերի միջև 21.10.2020 թվականին կնքված թիվ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» պայմանագրով նախատեսված պարտավորությունները:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը՝ թիվ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» պայմանագրի (այսուհետ նաև պայմանագիր) շրջանակում Ընկերությունը մատակարարել է հականեխիչ (անտիսեպտիկ) ախտահանիչ միջոցներ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում՝ 2020 թվականի հոկտեմբերի 22-24 ընկած ժամանակահատվածում, որը ապացուցվում է մատակարարման վերաբերյալ ցուցակով և ստացողների ստորագրություններով (այսուհետ նաև ցուցակ): Ի դեպ պետք է փաստել, որ մատակարարման ենթակա ապրանքները, ըստ հասցեների մատակարարելու ցուցակը Պատվիրատուն է ուղարկել ընկերությանը էլեկտրոնային փոստի միջոցով: Ինչպես պայմանագիրը՝ 22.10.2020 թվականին, այնպես էլ, հանձնման-ընդունման ակտը կից ցուցակով՝ 24.10.2020 թվականին ընկերության կողմից հանձնվել է Պատվիրատուի աշխատակիցներից Արսեն Մելքոնյանին, ըստ Պատվիրատուի՝ գնումների համակարգման պատասխանատու՝ Արթուր Բադեյանի բանավոր ցուցումի, քանզի պայմանավորված պանդեմիայով մարզպետարանը փակ էր: Պատվիրատուին ապրանքները մատակարարելու վերաբերյալ կնքված հանձնման-ընդունման ակտը հանձնելուց հետո, 15 աշխատանքային օրվա ժամկետում չի կազմել բացասական եզրակացություն:

Մինչ պայմանագրի կնքումը 12.10.2020 թվականին ընկերությունը ներկայացրել է իր կողմից մատակարարվող ապրանքի վերաբերյալ պարզաբանում, նշելով որ մատակարարվելու է գնման հայտով ներկայացված «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցը: Գնման հայտի ապրանքի նկարագրով նշվել է նաև, որ «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցը պետք է մատակարարվի նաև ցողացրիչով: Արդյունքում գնման ընթացակարգի 09.10.2020 թվականի թիվ 2 արձանագրությամբ «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերության հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին: Պայմանագրի տեխնիկական բնութագրով նույնպես նախատեսվել է, որ պետք է մատակարարվի «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոց՝ նաև ցողացրիչով:

20.11.2020 թվականին պատվիրատուն ապրանքների մատակարարումից շուրջ մեկ ամիս անց ընկերությունից պահանջել է մատակարարված ապրանքների վիրուսաբանական-մանրէաբանական լաբորատոր փորձաքննության փաստաթղթեր: Ընկերությունը ներկայացնելով փորձաքննության արդյունքները հայտնել է նաև, որ պայմանագրով նման պարտավորություն չունի: Պայմանագրի 4.1. կետի համաձայն՝

վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին: Ընկերությունը դեռևս 30.06.2015 թվականին հաստատվել է իր կողմից արտադրվող «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցի համապատասխանությունը, որը հաշվառվել է նույն օրը «ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ կողմից, ընկերությունը ունի նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված համապատասխանության հավաստագիր և լիցենզիա՝ Կ-ԴԱ-000002:

ՀՀ ԱՆ գլխավոր քարտուղար՝ Լուսինե Քոչարյանի 26.11.2020 թվականի գրությամբ նշվել է, որ պայմանագրի տեխնիկական բնութագրում նշված է «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոց, իսկ մեթոդական ուղեցույցը ներկայացված է «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցի համար և վերջին հարցման արդյունքում պարզվել է որ «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցը չունի վիրուսասպան փորձաքննության արդյունքներ: Հիմք ընդունելով նշվածը ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 09.12.2020 թվականի թիվ 02/8094 գրությամբ խեղաթյուրելով վերոհիշյալ գրությամբ նշված տեղեկատվությունը ձևափոխել է վիրուսասպան փորձաքննության արդյունք չունենալու փաստը և մեկնաբանել ու որոշել, որ այդ միջոցը չունի վիրուսասպան հատկություն և պահանջել փոխարինել այն 10 օրվա ընթացքում, հակառակ դեպքում սպառնալով միակողմանի լուծել պայմանագիրը և լուծել է այն 25.12.2020 թվականին:

Նախ եթե «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցը չունի վիրուսասպան փորձաքննության արդյունքներ դա դեռևս չի նշանակում, որ չունի վիրուսասպան հատկություններ, այդ հանգամանքը կարող է պարզվել միայն համապատասխան փորձաքննության արդյունքներով, որը ՀՀ-ում որևէ կազմակերպություն չի իրականացնում: Ուստի գեղարքունիքի մարզպետարանի դիրքորոշումը այն մասին, որ «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցը չունի վիրուսասպան հատկություններ մտացածին է և այդ մասին որևէ հիմնավորող փաստ առկա չէ: Պատվիրատուն զրկված չէր մատակարարված ապրանքները ներկայացնելու փորձաքննության այդ մասով ծագած խնդիրը պարզաբանելու և նոր միայն իրավաչափ վարքագծի արդյունքում փաստելու ապրանքի որակի համապատասխանության հարցը, ավելին ընկերության պահանջը՝ մատակարարված ապրանքի մնացորդը վերադարձնելու և այն փորձաքննության ներկայացնելու համար, մնաց անպատասխան քանզի Պատվիրատուն այն օգտագործել է, հակառակ պարագայում 24.10.2020 թվականից մինչև

22.11.2020 թվականը ռիսկի է ենթարկել դպրոցականների և դպրոցի աշխատակիցների կյանքն ու առողջությունը, որը այլ իրավական հետևանքներ կարող է առաջացնել:

Ամփոփելով վերոգրյալը գտնում եմ, որ որևէ փաստաթղթով չի հիմնավորվում «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոց վիրուսասպան հատկություններ չունենալու փաստը, ուստի չի կարող մատակարարված ապրանքը համարվել, որակին չհամապատասխանող, ավելին ՀՀ էկոնոմիկայի նախարարության «ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Անի Օբոսյանի 16.12.2020 թվականի թիվ ԱՕ-644 գրության համաձայն՝ ՀՀ-ում ախտահանիչ միջոցներ արտադրանքով համատարմագրված է միայն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «ՌԵՖԵՐԵՆՍ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԿԵՆՏՐՈՆ» մասնաճյուղի փորձարկման լաբորատորիան, սակայն այն նույնպես հակամանրէային և հակասնկային փորձարկումներ չի կատարում, որը հավաստվում է նաև ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի 24.12.2020 թվականի թիվ ԱՎ/ՌԱԿ/Տ.2/530-20 գրությամբ: Ուստի ախտահանիչ միջոցի վիրուսասպան հատկություններ չունենալու վերաբերյալ փորձաքննությունը ՀՀ-ում իրականացնելու անհնարինության պայմաններում, փաստել, այն մասին որ այդ միջոցը չունի վիրուսասպան հատկություններ, առնվազն ոչ պրոֆիսոնալ մոտեցում է: Սակայն բոլոր դեպքերում «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոց վիրուսասպան հատկություններ չունենալու փաստը ենթակա է ապացուցման Պատվիրատուի կողմից:

Ինչ վերաբերվում է ՀՀ ԱՆ մեթոդական ցուցումներում «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցի և «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցի տարբերությանը, ապա այն առնվազ ծիծաղելի է «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցը դա նույն «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցն է ցողացրիչով, որը նախատեսված է պայմանագրի տեխնիկական բնութագրով: SPRAY բառը դա վերաբերվում է ցողացրիչին և չի փոխում «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցի տեսակը, այն նույն «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցն է ցողացրիչով, որը նաև հավաստվում է ՀՀ ԱՆ 05.10.2015 թվականի թիվ 2516-Ա հրամանով հաստատված N2 հրահանգով, որտեղ նշված «BC CleanUP SPRAY» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցի բաղադրությունը նույնական է «BC CleanUP» ֆիրմային անվանումով ախտահանիչ միջոցի պայմանագրում նշված բաղադրությանը:

Ի վերջո Պատվիրատուն իրավունք ունի լուծել պայմանագիրը նույն պայմանագրի 2.1.7. կետի հիմքով, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, Իսկ պայմանագրի էական խախտում է համարվում անպատշաճ որակի ապրանքի մատակարարումը՝ պայմանգրի 2.1.7.1. կետ:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել, որ Պատվիրատուն պայմանագիրը միակողմանի լուծել է անպատշաճ որակի ապրանք մատակարարելու հիմքով, սակայն չունենալով որևէ հիմնավորող ապացույց, այլ խեղաթյուրված մեկնաբանելով վիրոաասպան փորձաքննության արդյունք չունենալը, որպես վիրոաասպան հատկություն չունենալ: Ուստի այս մասով բաց է մնում այն ապացույցի առկայությունը, որը կհիմնավորի անպատշաճ որակի ապրանք մատակարարելու հանգամանքը, իսկ պատվիրատուի կողմից մատակարարված ապրանքի մնացորդի չվերադարձնելը հնարավորություն չի ստեղծում ստանալու նման ապացույց, եթե իհարկե այն ՀՀ-ում հնարավոր է:

Ուստի պատասխանելով պարզաբանման ենթակա այն հարցադրմանը, թե՞ արդյոք «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերությունը խախտել է կողմերի միջև 21.10.2020 թվականին կնքված թիվ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» պայմանագրով նախատեսված պարտավորությունները, պետք է արձանագրել, որ առկա չէ անպատշաճ որակի ապրանք մատակարարելու վերաբերյալ որևէ ապացույց, ուստի պայմանագիրը լուշվել է ոչ իրավաչափ:

Իսկ գործող օրենսդրական կարգի համաձայն՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար, որպես պարտադիր վավերապայման Օրենսդիրը նախատեսել է պայմանագրով նախատեսված խախտման փաստը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Սույն դեպքում պայմանագրով նախատեսված ենթադրյալ խախտումը վերաբերվում է անպատշաճ որակի ապրանքի մատակարարմանը, որը չի հիմնավորվում որևէ փաստաթղթով, ուստի պայմանագրի միակողմանի լուծումը չի բխում գործող օրենսդրությունից և պայմանագրից և կատարվել է ոչ իրավաչափ գործողության արդյունքում Պատվիրատուի սուբյեկտիվ ակնհայտ անհիմն վերլուծություն արդյունքում:»:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը մերժել:

Մասնակիցը 26.01.2021թ-ին ներկայացված մեկ այլ գրությամբ հայտնել է հետևյալը.

«Անդրադառնալով Պատվիրատուի կողմից թիվ ՍՅ-ԼՕ-2021/08 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված դիրքորոշմանը հայտնեմ, որ ըստ էության հիմնական դիրքորշումից զատ անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել մի քանի կարևոր հանգամանք:

Առաջին Պատվիրատուն նշել է, որ Պայմանագրի որևէ դրույթով պարտավորություն չի կրում մատակարարված ենթադրյալ «անորակ» ապրանքի ետ վերադարձման համար և որ «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերությանը հայտնել է փոխարինման ենթակա ապրանքների քանակի վերաբերյալ տեղեկատվություն:

Նախ նշեմ, որ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» պայմանագրի (այսուհետ նաև պայմանագիր) 2.1.7. կետն է սահմանում պայմանագրի միակողմանի լուծման հիմքերը, և որ Գնորդն իրավունք ուներ միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Իսկ պայմանագրի էական խախտում է համարվում, եթե Վաճառողը մատակարարել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում: Բավական չէ, որ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծել է սխալ իրավական հիմքով, այն էլ սխալ մեկնաբանությամբ նշում է, որ Պայմանագրով նախատեսված չէ անորակ ապրանքի փոխարինման հնարավորություն և որ Պատվիրատուն նման պարտավորություն չունի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն՝ Քաղաքացիական իրավական նորմերը պետք է մեկնաբանվեն գրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ:

Քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է սույն օրենսգրքի 3 հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

Նույն օրենսգրքի 447-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը, կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:

Վերոհիշյալ իրավական նորմերի և սույն գործի փաստերի համապարփակ վերլուծությունից պետք է փաստել, որ պայմանագրով, կողմերը արտահայտելով իրենց կամքը նպատակ են հետապնդել մի կողմից մատակարարելու պայմանագրով նախատեսված ապրանքներ և ստանալու դրա դիմաց վճարում, իսկ մյուս կողմից ստանալու այդ ապրանքները և վճարելու դրա դիմաց պարտավորություն: Պայմանգրի 2.7.1. կետի դրույթների համաձայն պայմանագրի տառացի մեկնաբանման ակնհայտ է, որ կողմերի Պայմանագրի շրջանակում ակնկալած արդյունքը դա որակով ապրանք ստանալն է, իսկ դրա անորակ լինելու դեպքում դրա փոխարինման հնարավորությունը և որպես արդյունք որակով ապրանք ստանալը: Այսինքն ելնելով քաղաքացիական իրավունքի սկզբունքներից և պայմանագրի մեկնաբանությունից (ի դեպ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածը կիրառելի է ոչ միայն դատարանի, նաև այլ անձանց կողմից մեկնաբանվելուց) ակնհայտ է, որ եթե ենթադրենք մատակարարվել էր անորակ ապրանք, ապա այն պետք է փոխարինվեր որակով ապրանքով, որի չկատարումից հետո նոր միայն Պատվիրատուի մոտ կծագեր Պայմանագիրը միակողմանի լուծելու իրավական հիմքը: Ինչ վերաբերվում է Պատվիրատուի կողմից փոխարինման ենթակա ապրանքների քանակի վերաբերյալ տեղեկատվությունը «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերությանը հայտնելուն, ապա դա սոսկ բառեր են, որոնց վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացվել սույն գործի քննության ընթացքում, ավելին Պատվիրատուն ներկայացրել է այն հարցումը, որով խնդրվել է տրամադրել տեղեկատվություն փոխարինման ենթակա ապրանքների քանակի վերաբերյալ, սակայն դրա պատասխանը չի ներկայացրել եթե առկա էր:

Այս ամենի վկայակոչմամբ փաստում ենք, որ փոխարինման ենթակա ապրանք առկա չէ, այն ամբողջությամբ սպառվել է, և որ չգիտես ինչու ապրանքների մատակարարումից մեկ ամիս անց, նոր միայն պատվիրատուն հիշել է պայմանագրի մասին (իր աշխատակիցների ժամանակավոր անաշխատունակությունը հիմք չէ խուսափելու իր պարտավորություններից):

Այս ամենից հետևում է, որ մատակարարված ապրանքներից օրենքով սահմանված կարգով նմուշառում չի կատարվել, փորձաքննության չի ենթակրվել, այլ միայն «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերությունից իր մոտ առկա ապրանքներից կատարել համապատասխան փորձաքննություն, որը գործում առկա ապացույցներով հիմնավորումներով է, որ («վիրուսասպան» նույնիսկ տերմինը ճիշտ չեն կիրառել) հակամանրէային և հակասնկային փորձարկումներ չի կատարում նույնիսկ այն միակ կազմակերպությունը, որը միակն է որպես ՀՀ-ում ախտահանիչ միջոցներ արտադրանքով հավատարմագրված ընկերություն: Ավելին ի վերջո այդ մասին փաստեց ՀՀ առողջապահության նախարարությունը բազմաթիվ հարցումներից հետո իր գլխավոր քարտուղարի տեղակալի 21.01.2021 թվականի թիվ ՎՀ/04/660/21 գրությամբ:

Ոստի այս ամենի ամփոփմամբ պետք է փաստել, որ «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերության կողմից մատակարարված ապրանքների որակյալ կամ անորակ լինելու հանգամանքը կարող է փաստվել միայն հատուկ մասնագիտական գիտելիքներ պահանջող մասնագետի փորձագիտական եզրակացությամբ, այլ ոչ թե ենթադրությամբ, որը կատարվել է հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ կողմից հայտնած տեղեկությունը, որ ներկայացված փաստաթղթերում առկա չէ վիրուսասպան փորձաքննության արդյունք, և այն ձևափոխելով, որպես վիրուսասպան հատկություն չունենալու:

Անդրադառնալով նաև այն դիրքորոշմանը, որ Վաճառողի՝ «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերության կողմից ապրանքների մատակարարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը ներկայացվել է 21.10.2020 թվականով և ապրանքները մատակարարվել են 22-24.10.2020 թվականի ժամանակահատվածում, առնվազն անհասկանալի է: «Կարծե՞ս թե առկա է կողմերի միջև կնքված պայմանագիրը իրավական փորձաքննության ներկայացնելու անհրաժեշտություն:»

Կողմերի միջև կնքված Պայմանագրի 5.1. կետի համաձայն՝ Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) ...

Վերոգրյալի և պայմանագրի մեկնաբանման ընդհանուր կանոնների համատեքստում պետք է փաստել հետևյալը, որ մատակարարման ենթակա ապրանքները, ըստ թիվ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» պայմանագրի շրջանակում Ընկերությունը մատակարարվել է պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում՝ 2020 թվականի հոկտեմբերի 22-24 ընկած ժամանակահատվածում, ըստ Պատվիրատուի կողմից տրված հասցեների: Պայմանագրի 5.1. կետի մատակարարման ենթակա ապրանքը տարբեր հասցեներով մատակարարելու պահանջը իրենից ենթադրում է հետևյալը, որ Պատվիրատուն պետք է նախապես ընդուներ մատակարարման ենթակա ապրանքը, որը մատակարարումից մեկ օր առաջ պետք է ներկայացվեր Պատվիրատուին, հանձնման-ընդունման արձանագրության հետ միասին և Պատվիրատուի կողմից այն ընդունվելու դեպքում մատակարարվեր ըստ Պատվիրատուի նշած հասցեների: Պայմանավորված նշվածով Վաժառողը 20.10.2020 թվականին կնքված պայամանգրից անմիջապես մեկ օր անց հիմք ընդունելով Պատվիրատուի բանավոր այն պահանջը, որ ապրանքները անհրաժեշտ են շտապ հենց հաջորդ օրը՝ 21.10.2020 թվականին մատակարարել է դրանք կազմելով հանձնման-ընդունման արձանագրություն և հաջորդ օրվանից 22-24.10.2020 թվականը մատակարարել դրանք ըստ Պատվիրատուի նշած հասցեներից, որը հենց բխում է Պայմանագրի 5.1. կետի դրույթներից (տես պայմանագրի 5.1. կետի երկրորդ պարբերություն):

Ավելին սույն գործով 21.01.2020 թվականին հրավիրված նիստի ընթացքում ընդունեց և փաստեց Պատվիրատուի աշխատակից և ներկայացուցիչ Արսեն Մելքոնյանը, նշելով նույնիսկ, որ հանձնման-ընդունման արձանգրությունը վերցնելուց հետո «գցել է դարակը» քանզի աշխատակիցները տեղում չէին պայմանավորված պանդեմիայով: Այսինքն նշվածը փաստում է վաճառողի և գնորդի վարքագիծը, այն մասին որ վաճառողը պայմանագրի կնքումից հետո մեկ օր անց, պայմանագրի 5.1. կետի համաձայն կազմել է հանձնման-ընդունման արձանագրություն, մատակարարել է ապրանքները, որը ընդունվել է Պատվիրատուի կողմից, հանձնման-ընդունման արձանգրությունը վերցնելուց հետո «գցել է դարակը», պայմանագրի 2.2.1.; 2.2.2.; 2.2.3. և 2.2.4 կետերի համաձայն ընդունելով ապրանքը նույն կետերի համաձայն չի հրաժարվել ապրանքների ընդունումից, և 15 աշխատանքային օրվա ընթացքում առարկություններ չի ներկայացրել ապրանքի որակի վերաբերյալ, ապա նույն պայմանագրի 5.2. և 5.4. կետերի համաձայն այն համարվում է ընդունված: Ինչ վերաբերվում է armeps էլեկտրոնային համակարգի միջոցով հանձնման-

ընդունման արձանագրությունը դուրս չգրելուն, ապա դա ընդհանրապես կապ չունի ապարանքները ընդունված համարվելու հետ, այն միայն կարող է լրացուցիչ ապացույց հանիդսանալ մատակարարված ապրանքները հանձված և ընդունված լինելու վերաբերյալ:

Ամփոփելով նշեմ, որ կողմերի միջև կնքված պայմանագրի ընդհանուր մեկնաբանությունից ակնահայտ է, որ մինչև ապրանքների մատակարարումը ըստ հասցեների պետք է կատարվեր Պատվիրատուի կողմից, որից հետո նոր միայն առաքվեր, ի դեպ մեկ օր առաջ Վաճառողը պետք է ներկայացներ հանձնման-ընդունման արձանագրությունը կնքված և ստորագրված, որը կատարվել է Վաճառողի կողմից, ապրանքները ընդունվել են Պատվիրատուի կողմից, իսկ հանձնման-ընդունման արձանգրությունը վերցնելուց հետո «գցել է դարակը» և հենց հաջորդ օրվանից Վաճառողի ապրանքները մատակարարվել են ըստ հասցեների, որի վերաբերյալ ապացույցը նույնպես ներկայացված է: Արդյունքում պատվիրատուն մեկ ամիս անց միակողմանի լուծել է պայմանագիրը առանց որևէ փաստական հիմքի այն մասին, թե՞ արդյոք իրականում առկա են անորակ մատակարարված ապրանքներ, թե՞ ոչ և նաև առանց իրավական հիմքի ղեկավարվելով պայմանագրի 2.1.1. կետով, որը Պատվիրատուին պայմանագրի միակողմանի լուծման հնարավորություն չէր տալիս: Իսկ եթե Պատվիրատուն առաջնորդվեր ճիշտ կիրառելի նորմով, ապա կփաստեր, որ առկա չէ պայմանագրի միակողմանի լուծման հիմք, քանզի ենթադրյալ «անորակ» ապրանքները չեն տրամադրվել փոխարինման, ավելին ըստ իր դիրքորոշման նման պարատվորություն չուներ (եթե իհարկե այդ ապրանքները չի սպառել):»:

Մասնակցի կողմից 04.02.2021թ.-ին ներկայացված դիրքորոշման լրացման համաձայն՝

«Ձեր վարույթում քննվող ՍՑ-ԼՕ-2021/08 ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) մեկ անհիմն նախադասությամբ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է հասցեագրել գրություն այն մասին, թե՞ իբր ենթադրյալ անորակ ապրանքի քանակի մասին հայտնել է «ԲԻՈ-ՔԻՄ» ՍՊ ընկերությանը հեռախոսով, որի մասին առարկություն չի եղել:

Տեղեկատվությունը ակնհայտ անհիմն է, չի համապատասխանում իրականությանը, առկա չէ որևէ ապացույց և պարզապես «սեղանին նետված» անհասկանալի արդարացում է:»:

4. **<u>ՍՑ-LO-2021/08 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հականեխիչ անտիսեպտիկ և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 06.10.2020թ.-ին հայտարարված «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում վերջինիս և «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի միջև 21.10.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

iii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանվել է գնման առարկայի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ գնման առարկա է հանդիսանում հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցները՝ հետևյալ տեխնիկական բնութագրով. 70-90 % սպիրտ կամ քլորի հիմքով ախտահանիչ միջոց (խտանյութ), որն ունի ԱՆ հրամանով հաստատված մեթոդական հրահանգ: Փաթեթավորումը՝ 0.5 լիտր ծավալով պոլիէթիլենային տարա, որից պատրաստվում է առնվազն 200 լիտր աշխատանքային լուծույթ, որն ապահովում է հակաբակտերիալ, հակավիրուսային և հակասնկային ազդեցություն (ինչը հաստատված լինի ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգներով): Աշխատանքային լուծույթով շենքերում սրբելու եղանակով մակերեսների մշակման ժամանակ անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործումը անհրաժեշտություն չկա և կարելի է կատարել մարդկանց ներկայությամբ: Վերջնական օգտագործման համար ստացվող ախտահանիչ նյութի աշխատանքային լուծույթի արժեքը ստանալու համար հաշվարկները կատարվելու են համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից հաստատված մեթոդական հրահանգների և ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի՝ հիմք ընդունելով հակաբակտերիալ, հակավիրուսային և հակասնկային ախտահանման ռեժիմները: Խտանյութի պիտանիության ժամկետը 3 տարի: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության

ժամկետի 2/3-ի առկայություն: Վտանգավորության աստիճանը՝ 4-րդ, 5-րդ դաս: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար որակի հավաստագրի առկայություն: ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգի առկայություն: Փաթեթավորումը՝ արտադրական:

iv. Պատվիրատուն Մասնակցին 20.11.2020թ.-ին ուղղված թիվ 02/7771 գրությամբ խնդրել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34 ծածկագրով ՀՄԱ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակից ընկերության կողմից արտադրված հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների վիրուսաբանական-մանրէաբանական լաբորատոր փորձաքննության փաստաթղթերը:

v. Մասնակիցը, ի պատասխան վերոնշյալ գրության, 23.11.2020թ.-ին Պատվիրատուին հայտնել է, որ «Բիո-Քիմ» ընկերության կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հայտարարած մրցույթի կողմից պահանջվող տեխնիկական բնութագրին: Հատկապես ՀՀ ԱՆ կողմից տրված մեթոդական հրահանգը, որը փաստում է ախտահանիչի հակաբակտերիալ, հակասնկային և հակավիրուսային ազդեցությունը: Հարկ են համարում նշել, որ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ն որպես գիտա-արտաղրական ընկերություն պատասխանատվություն է կրում մատակարարված ապրանքի ֆունկցիոնալ ազդեցության և որակի համար: Բացի այդ պայմանագիր կնքելուց առաջ՝ 12.10.2020թ.-ին ընկերության նախաձեռնությամբ ներկայացվել է պարզաբանում մատակարարվող ապրանքի բաղադրության, կիրառման ոլորտի, ազդեցության ռեժիմների վերաբերյալ, որից գրեթե մեկ շաբաթ անց 20.10.2020թ.-ին կնքվել է պայմանագիր:

vi. Պատվիրատուն 23.11.2020թ.-ի թիվ 02//7825-2020 գրությամբ ՀՀ առողջապահության նախարարությանը հայտնել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կարիքների համար հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցների ու հականեխիչ (անտիսեպտիկ) հեղուկների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34 ծածկագրով ՀՄԱ գնման ընթացակարգ, որում ներկայացվել է պահանջ՝ ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգի առկայության մասին: Հրավերի 1-ին մասի 8.21 կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ հրավերի պահանջներին բավարարող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել ՀՀ ԱՆ օգտագործման մեթոդական հրահանգի առկայությունը հավաստող փաստաթղթեր /հավելված 1.1-ում մասնակիցը հավաստիացրել է վերջինիս առկայության մասին/: Հիմք ընդունելով Հրավերի 1-ին մասի 8.21 կետի դրույթները, Պատվիրատուն ՀՀ առողջապահության նախարարությանն է ներկայացրել մասնակցի ներկայացրած տվյալները և խնդրել դրանց վերաբերյալ տրամադրել եզրակացություն:

vii. ՀՀ առողջապահության նախարարության կողմից ի պատասխան Պատվիրատուի 23.11.2020թ.-ի թիվ 02//7825-2020 հարցմանը տրված գրության համաձայն՝ հայտնել են, որ տեխնիկական բնութագրի մեջ նշված է «BC CLEAN UP» միջոցը, իսկ մեթոդական ուղեցույցը ներկայացված է «BC CLEAN UP SPRAY» միջոցի համար: Միաժամանակ հայտնել են, որ «BC CLEAN UP SPRAY» միջոցի վերաբերյալ վերջին լրացուցիչ հարցման արդյունքում պարզվել է, որ այդ միջոցը չունի վիրուսասպան փորձաքննության արդյունքներ, իսկ մնացած փորձաքննություններն իրականացվել են կազմակերպություններում, որոնք չեն համապատասխանում ՀՀ Առողջապահության նախարարի 2014 թվականի մայիսի 7-ի թիվ 17-Ն հրամանի 8-րդ կետի պահանջներին:

viii. Պատվիրատուն, ստանալով վերոնշյալ գրությունը, Մասնակցին 09.12.2020թ.-ին ուղղված թիվ 02/8094 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի և «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի միջև կնքված հականեխիչ /անտիսեպտիկ/ և ախտահանիչ միջոցների մատակարարման պայմանագրի համաձայն վերջինիս կողմից մատակարարված ապրանքը չի համապատասխանում մարզպետարանի մրցույթի հայտով ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագրին: Միաժամանակ հայտնել է, որ Պատվիրատուի հարցմանն ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարությունը ներկայացրել է պարզաբանում, որ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված «BC CLEAN UP SPREY» արտադրանքը չունի վիրուսասպան հատկություններ:

Վերոգրյալի հաշվառմամբ, հիմք ընդունելով պայմանագրի 2.1.4 կետի «գ» ենթակետը, առաջարկել է Մասնակցին ողջամիտ ժամկետում՝ 10 օրվա ընթացքում, փոխարինել վերջինիս մատակարարած ապրանքը՝ ստանդարտին համապատասխանող ապրանքով:

ix. Մասնակիցը Պատվիրատուին 10.12.2020թ.-ին ուղղված գրությամբ, ի պատասխան Պատվիրատուի վերոնշյալ գրության, հայտնել է, որ «Բիո-Քիմ» ընկերությունը

պատրաստակամ է կատարելու 2020թ. հոկտեմբերի 21-ին կնքված «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» պայմանագրով սահմանված պարտականությունները:

x. Ի լրումն 10.12.2020թ.-ի ներկայացված վերոնշյալ գրության, Մասնակիցը 14.12.2020թ.-ին Պատվիրատուին խնդրել է 21.10.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքի մնացորդային քանակության վերաբերյալ տեղեկատվություն հայտնելուց բացի վերադարձնել այն, որպեսզի հնարավոր լինի իրականացնել համապատասխան փարձաքննություն ապրանքի որակի վերաբերյալ:

Ինչպես նաև հավելել է, որ Պատվիրատուի այն դիրքորոշումը, որ ներկայացված Փաստաթղթերում առկա չէ համապատասխան փարձաքննություն, որը նշանակում է, որ մատակարարված ապրանքը չի համապատասխանում որակին, հիմնավոր չէ, քանզի Փորձաքննության բացակայությունը խոսում է ոչ թե որակի, այլ դրա վերաբերյալ Փաստաթղթի բացակայության մասին:

xi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 25.12.2020թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի միջև 21.10.2020թ.-ին կնքված «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» գնման պայմանագրի շրջանակներում Մասնակցի կողմից խախտվել է պայմանագրի 6.1 կետի պահանջները (վաճառողը պատասխանատվություն է կրում ապրանքի որակի պահպանման համար) և չի մատակարարել պայմանագրի տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանք:

Պայմանագրի 2.1.4 կետի «գ» ենթակետի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը 09.12.2020թ.-ին գրությամբ դիմել է Մասնակցին՝ 10 օրվա ընթացքում ստանդարտին համապատասխան ապրանք մատակարարելու համար, սակայն տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքը տվյալ ժամանակահատվածում չի փոխարինվել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «ա» պարբերության պահանջները՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը 2020թ.-ի դեկտեմբերի 25-ից միակողմանի լուծում է «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» պայմանագիրը:

xii. ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից 16.12.2020թ.-ին տրված թիվ ԱՕ-644 գրության համաձայն՝ ՀՀ-ում ախտահանիչ միջոցներ արտադրանքով հավատարմագրված է միայն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման տզգային կենտրոն» ՊՈԱԿ-ի

«Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի փորձարկման լաբորատորիան, սակայն լաբորատորիայի հավատարմագրման ոլորտում բացակայում են հակամանրէային և հակասնկային փորձարկումները:

xiii. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման տզգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 24.12.2020թ.-ին տրված թիվ ԱՎ/ՌԼԿ/Տ.2/530-20 գրության համաձայն՝ ներկայում «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղում ախտահանիչ միջոցների հակամանրէային և հակասնկային ազդեցության ուսումնասիրություն չի իրականացվում:

xiv. ՀՀ առողջապահության նախարարության կողմից 21.01.2021թ.-ին տրված թիվ ՎՀ/04/660/21 գրության համաձայն՝ ախտահանիչ միջոցների լաբորատոր փորձաքննության հավատարմագրումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և այդ լաբորատորիաների աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը Առողջապահության նախարարության լիազորությունների շրջանակից դուրս է: Ինչ վերաբերում է Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղին, ապա վերջինը փորձաքննության այդ տեսակը ներկայում չի իրականացնում:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/257-2021 գրությամբ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ

իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, գնորդն իրավունք ունի՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում:

Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ»*

ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հականեխիչ անտիսեպտիկ և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 06.10.2020թ.-ին հայտարարված «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածում ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից հականեխիչ անտիսեպտիկ և ախտահանիչ միջոցների ձեռքբերման նպատակով 06.10.2020թ.-ին հայտարարված «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» ծածկագրով մեկ անձից գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում վերջինիս և «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի միջև 21.10.2020թ.-ին կնքված թիվ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» ծածկագրով պետական գնման պայմանագիր հավելված 1-ով սահմանվել է գնման առարկայի անվանումը և տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ գնման առարկա է հանդիսանում հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցները՝ հետևյալ տեխնիկական բնութագրով. 70-90 % սպիրտ կամ քլորի հիմքով ախտահանիչ միջոց (խտանյութ), որն ունի ԱՆ հրամանով հաստատված մեթոդական հրահանգ և այլ տեխնիկական բնութագրեր:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից ի պատասխան Պատվիրատուի 23.11.2020թ.-ի թիվ 02//7825-2020 հարցմանը տրված գրությամբ պարզվել է, որ «BC CLEAN UP SPRAY» միջոցը չունի վիրուսասպան փորձաքննության արդյունքներ, իսկ մնացած փորձաքննություններն իրականացվել են կազմակերպություններում, որոնք չեն համապատասխանում ՀՀ Առողջապահության նախարարի 2014 թվականի մայիսի 7-ի թիվ 17-Ն հրամանի 8-րդ կետի պահանջներին:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից 16.12.2020թ.-ին տրված թիվ ԱՕ-644 գրության համաձայն՝ ՀՀ-ում ախտահանիչ միջոցներ արտադրանքով հավատարմագրված է միայն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման տզգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի փորձարկման լաբորատորիան, սակայն լաբորատորիայի հավատարմագրման ոլորտում բացակայում են հակամանրէային և հակասնկային փորձարկումները:

ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման տզգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 24.12.2020թ.-ին տրված թիվ ԱՎ/ՌԼԿ/Տ.2/530-20 գրության համաձայն՝ ներկայում «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն»

ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղում ախտահանիչ միջոցների հակամանրէային և հակասնկային ազդեցության ուսումնասիրություն չի իրականացվում:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից 21.01.2021թ.-ին տրված թիվ ՎՀ/04/660/21 գրության համաձայն՝ ախտահանիչ միջոցների լաբորատոր փորձաքննության հավատարմագրումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից և այդ լաբորատորիաների աշխատանքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը Առողջապահության նախարարության լիազորությունների շրջանակից դուրս է: Ինչ վերաբերում է Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղին, ապա վերջինը փորձաքննության այդ տեսակը ներկայում չի իրականացնում:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ, տվյալ դեպքում, «Բիո-Քիմ» ՍՊԸ-ի կողմից թիվ «ՀՀ-ԳՄ-ՄԱԱՁԲ-20/34» ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում մատակարարված «BC CLEAN UP SPRAY» ապրանքը չունի վիրուսասպան փորձաքննության արդյունքներ, իսկ մնացած փորձաքննություններն իրականացվել են կազմակերպություններում, որոնք չեն համապատասխանում ՀՀ Առողջապահության նախարարի 2014 թվականի մայիսի 7-ի թիվ 17-Ն հրամանի 8-րդ կետի պահանջներին, այն է՝ ախտահանիչ միջոցների ախտահանաբանական փորձաքննությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հավատարմագրված կազմակերպությունների ցանկում ընդգրկված կազմակերպությունների կողմից, որոնք ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան անհրաժեշտ գիտական և նյութական ապահովում, համապատասխան մասնագիտացմամբ և որակավորմամբ մասնագետներ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի կողմից 16.12.2020թ.-ին տրված թիվ ԱՕ-644, ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման տզգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 24.12.2020թ.-ին տրված թիվ ԱՎ/ՌԼԿ/Տ.2/530-20 և ՀՀ առողջապահության նախարարության կողմից 21.01.2021թ.-ին տրված թիվ ՎՀ/04/660/21 գրություններով հիմնավորվում է, որ ախտահանիչ միջոցների լաբորատոր փորձաքննության հավատարմագրումն իրականացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Հավատարմագրման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, ՀՀ-ում

ախտահանիչ միջոցներ արտադրանքով հավատարմագրված է միայն ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման տզգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղի փորձարկման լաբորատորիան, սակայն լաբորատորիայի հավատարմագրման ոլորտում բացակայում են հակամանրէային և հակասնկային փորձարկումները:

Ընդ որում, հարկ է փաստել նաև, որ Պատվիրատուն (գնահատող հանձնաժողովը) մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման ընթացքում՝ մինչև պայմանագրի կնքումը, կարող էր կիրառել Կարգի 67-րդ կետի (Հրավերի 8.21) դրույթով նախատեսված իր հայեցողական լիազորությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը, որը չի կատարել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք

ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորությունն անպատշաճ կատարելը չի կարող հանգեցնել պատասխանատվության, քանի որ բացակայում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ վերջինիս մեղքի առկայությունը: Մասնակիցը օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված (ՀՀ-ում ախտահանիչ միջոցների ախտահանաբանական փորձաքննությունն իրականացնելու

համար հավատարմագրված լաբորատոր կենտրոնի բացակայությամբ պայմանավորված), հնարավոր չի եղել դրանք հասցնել իրենց տրամաբանական ավարտին:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.01.2021թ.-ի թիվ 26/26-1/257-2021 գրությամբ «Բիո-Քիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/08 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**